Հաստատում եմ

Դպրոցի տնօրեն՝ Digitally signed by HARUTYUNYAN LILIT 5810860575
Date: 2022.08.30 13:52:51 MSK Լ.Հարությունյան

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ՈՒՇԻ Ն.ԱՂԲԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

2022-2023 ՈՒՍՈՒՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍՎԱՐ՝ Լ.ՍԻՄՈՆՅԱՆ

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)- 2022-2023 ուսումնական տարվա սկզբում IV դասարանում սովորում են 21 աշակերտ՝ 11 տղան 10 աղջիկ: Աշակերտները ակտիվ են և հետաքրքրությամբ են մասնակցում դասերին: Բոլոր աշակերտները շփվող են, հոգատար և մեծ հաճույքով օգնում են ինրենցից թույլ աշակերտներին: Ազատ կարողանում են արտահայտել սեփական կարծիքը: Դասարանում չկա ԿԱՊԿՈՒ սովորող, կապը ծնողների հետ միշտ պահվում է:

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում Ուսումնադաստիարակչական նպատակով սահամնել սովորողների հաճախումների, առաջադիմության և վարքի ընթացիկ վերահսկողություն, սերտ համագործակցություն ծնողների հետ: Ապահովել բարեկիրթ միջավայր երեխաների հայեցի, գեղագիտական, ռազմա-հայրենասիրական, ֆիզիկական, աշխատանքային, բնապահպանական դաստիարակության համար: Սովորողների մոտ ձևավորել պատասխանատվության զգացում, աշխատանք տանել աշակերտների կարգապահության, հաճախումներին ուսումնական առաջադիմության բարելավման ուղղությամբ: Դասղեկի ժամերի ընթացքում զրուցել գեղեցիկի, հոգևոր արժեքների, հայոց բանակի, հերոսների, մարդկային լավ ու վատ հատկանիշների, արվեստի ու արհեստի, պարտականությունների,պատասխանատվության, աշխատասիրության ու գիտելիքի արժևորման մասին:

1. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Դաստիարակել հայրենասիրություն, մարդասիրություն, ազգասիրություն և խիզախություն: Ապահովել ազգայինի և համամարդկայինի միաձուլումը՝ չկորցնելով մեր մշակույթի հոգևոր արժեքները:Արժևորել մարդկային բարձր հատկանիշները:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Ձևավորել գեղեցիկի, արվեստի մասին տարրական գիտելիքներ, գեղեցիկը նկատելուև գնահատելու կարողություններ, գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկություն: Այս պատակով աշակերտներին ծանոթացնել աշխարհահռչակ նկարիչների և երաժիշտների գործերին: Բացատրել գրքի կարևորության մասին:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Հայրենիքի պաշտպանությանը բարոյապես և ֆիզիկապես պատրաստ քաղաքացի ձևավորելո նպատակով հաճախակի

կազմակերպել զրույցներ հայ ազգային հերոսների մասին, քառօրյա և 44-օրյա պատերազմների մասին:

3.4 ֆիզիկական դաստիարակություն Հետևել երեխայի շարժողական կարողություններին հմտությունների ձևավորմանը, առողջության պահպանմանն ու ամրապնդմանը: Զրուցել հակահամաճարակային կանոնների պահպանման կարևորության մասին: Անցկացնել սպորտի, առողջ ապրելակերպի մասին զրույցներ, քաջալերել սպորտով զբաղվող աշակերտներին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն «Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն»: Կարևորել աշխատանքի նկատմամբ սիրո դաստիարակությունը: Հաճախակի զրուցել աշխատանքի, արհեստների, մասին: Նշել, որ աշխատանքը կարող է դառնալ բերկրանքի աղբյուր, երբ մարդը նրանում տեսնում էին նոր նշանակալից բան:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Աշխատանք տանել, որպեսզի երեխաները գիտակցեն, որ Երկիր մոլորակն ունի բնապահպանական հիմնախնդիրներև ունի բոլորիս օգնության կարիքը: Աշակերտներին զինել տարրական էկոլոգիական գիտելիքներով: Զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ:

3.7 Դպրոց-ընտանիք կապը Ծնողների հետ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների հաղթահարման համար անհրաժեշտ որակներ ձևավորել: Խթանել ընտանիք-դպրոց համագործակցությունը:

N	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Ուս. շաբաթ
1	Գիտելիքի օր: Կազմակերպչական հարցեր	01.09-09.09.2022
2	Զրույց <<Սովորողների իրավունքները և պարտականությունները- ՀՀ օրենքը հանրակրթության մասին>>	12.09-16.09.2022
3	Զրույց նվիրված Անկախության օրվան	19.09-23.09.2022
4	Զրույց <<Մեր քաջ հերոսները>>	26.09-30.09.2022
5	Զրույց << Ուսուցչի դերը մեր կյանքում>> թեմայով	03.10-07.10.2022
6	Ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ գիտելիքների ստուգում:	10.10-14.10.2022
7	Անհատական աշխատանք ուսման մեջ թերացող աշակերտների հետ	17.10-21.10.2022
8	Զրույց <<Ինչ է առողջ ապրելակերպը>>	31.10-.-04.11.2022
9	Անհատական աշխատանք դժվար դաստիարակող աշակերտների հետ	07.11-11.11.2022
10	Զրույց << Հանդուրժողականություն>> Ինչպես լինել հանդուրժող	14.11-18.11.2022
11	Քննարկում՝ կոնֆլիկտների լուծման հմարավոր եղանակները	21.11-25.11.2022
12	Քննարկում՝ համակարգիչն ու հեռախոսը մեր առօրյայում	28.11-02.12.2022
13	Զրույց՝ 1988թ.-ի երկրաշարժի մասին: Ինչ անել երկրաշարժի ժամանակ:	05.12-09.12.2022
14	Զրույց՝ <<Մաքրությունը առողջության գրավական>> թեմայով	12.12-16.12.2022
15	Քննարկում<< Ինչպես եմ ձևավորելու իմ Ամանորյա տոնածառը>>: Դասասենյակի նախապատրաստում Նոր տարվան:	19.12-23.12.2022
16	Զրույց << Ընտանիքում իմ պարտականությունն է…>> թեմայով- շարունակում են աշակերտները:	09.01-13.01.2023
17	Զրույց << Համերաշխ դասարան >> թեմայով:	16.01-20.01.2023
18	Զրույց՝ Հարոց բանակի կազմավորման մասին:	23.01-27.01.2023
19	Զրույց՝ երեխաների կարծիքը կենդանիների մասին:	30.01-03.02.2023
20	Զրույց <<Ընթերցանություն մեր կյանքում>> թեմայով	06.02-10.02.2023
21	Զրույց<< Տյառնընդառաջ տոնի խորհուրդը>> թեմայով	13.02-17.02.2023
22	Զրույց << Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես>> թեմայով	20.02-24.02.2023
23	Զրույց << Հավերժ բարեկամ գիրքը>> թեմայով	27.02-03.03.2023
24	Զրույց << Աշխարհում ամենից շատ մայրիկիս ժպիտն եմ սիրում>> թեմայով	06.03-10.03.2023
25	Զրույց<< Համացանցի վտանգները և առավելությունները>> թեմայով	13.03-17.03.2023
26	Ընթերցում և քննարկում<< Եկեք պայմանավորվենք>>	20.03-24.03.2023

27	Զրույց <<Գեղեցկությունը շարժիչ ուժ է>> թեմայով	03.04-07.04.2023
28	Զրույց <<Տիեզերքի գաղտնիքները >> թեմայով	10.04-14.04.2023
29	Ընթերցում և քննարկում <<Աստղը>> թեմայով	17.04-21.04.2023
30	Քննարկում <<Հիշում և պահանջում ենք>> թեմայով	24.04-28.04.2023
31	Զրույց <<Աշխատանքը՝ նպատակին հասնելու միջոց>>թեմայով	01.05-05.05.2023
32	Զրույց խաղաղություն կերտողների մասին թեմայով	08.05-12.05.2023
33	Զրույց <<Մեր երկիրը՝ երեկ, այսօր և վաղը>> թեմայով	15.05-19.05.2023
34	Քննարկում << Իմ ձեռքբերումները այս ուսումնական տարում>> թեմայով	22.05-26.05.2023
35		